ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Հայնախագիծ» ԲԲԸ տնօրեն
Գրիգոր Ազիզյան
«08» նոյեմբեր, 2024

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Գոլրոխ Քեշավարզ Ռահբարի «Հայ-իրանական քաղաքաշինական առնչությունները մ. թ. ա. 8-րդ - մ.թ. 7-րդ դարերի ճարտարապետության համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացված է ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Թեմայի արդիականությունը

Պաշտպանության ներկայացված Գոլրոխ Քեշավարզ Ռահբարի ատենախոսությունը նվիրված է հայ-իրանական քաղաքաշինական առնչություններին՝ մ.թ.ա. 8-րդ - մ. թ. 7-րդ դարերի ճարտարապետության համատեքստում՝ ընդգրկելով հին աշխարհի քաղաքաշինության օրինակների հետ զուգահեռումները:

Ներածության մեջ ներկայացվում ու հիմնավորվում են հայ-իրանական քաղաքաշինական առնչությունները (նմանություններն ու տարբերությունները)՝ քննվող ժամանակաշրջանի (մ.թ.ա. 8-մ.թ. 7-րդ դդ.) ճարտարապետական համատեքստում՝ ընդգկելով միջագետքյան, հունահելլենիստական ու հռոմեական միջազգային զուգահեռները: Հարցը առնչվում է պատմական զարգացման ակունքներին, բնակավայրերի առաջացմանը, ինչը հենց քաղաքաշինություն է:

Հայերեն լեզվով շարադրված ատենախոսությունն ընդգրկում է 130 տեքստային էջ և 122 էջ հավելվածներ՝ 230 պատկերներով: Բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան եզրահանգումներով, ընդհանուր եզրակացություններից, 132 անուն օգտագործած գրականության ու հրատարակությունների ցանկից:

Առաջին գլուխը զբաղեցնում է 13-52 էջերը և բովանդակությամբ տեղեկատվական է՝ ներառելով թեմայի պատմական, տեսական և միջազգային զուգահեռ օրինակները: Այսինքն՝ ատենախոսը հետազոտել ու ներկայացրել է հին աշխարհում քաղաքաշինական ու ճարտարապետական զարգացումների պատմատեսական համառոտ ակնարկը, վերլուծել քաղաքաշինական մշակույթի առաջացման՝ քաղաքների ֆիզիկական ձևագոյացման սկզբունքները, անդրադարձել է դրանց աշխարհագրական տեղադիրքերին, քաղաքային միջավայրերի կառուցապատման առանձնահատկություններին, տարածաշրջանային երկրների քաղաքների հետ փոխառնչություններին, կրած ազդեցություններին և այլն: Հետազոտողը հիմնավորել է, որ ներկայացվող ժամանակագրական հարացույցում ընդգրկված հնագույն քաղաքները (հունական, հելլենիստական, հռոմեական, հայկական ու իրանական) կառուցվել կամ վերականգնվել են միջհաղորդակցության, փոխառնչությունների և փոխազդեցությունների հիման վրա, իսկ կատարված հետազոտություններից ստացված արդյունքների հիման վրա ի մի է բերել հին աշխարհի քաղաքաշինական մշակույթի զարգացման տեսական դրույթները՝ անդրադառնալով հնագույն քաղաքների հորինվածքային դասակարգման հարցերին:

Երկրորդ գլուխը զբաղեցնում է 53-98 էջերը և համապատասխան ենթագլուխներով բովանդակում է Իրանի հնագույն և վաղ միջնադարյան ժամանակաշրջանների (Էլամական, Մարական, Աքեմենյան, Պարթևական, Սասանյան թագավորությունների ժամանակաշրջաններ. մ.թ.ա. 8 - մ.թ. 7-րդ դդ.) տվյալները, որոնք ներառում են քաղաքային բնակավայրերի առաջացումը, կառուցապատումն ու զարգացումը՝ ներկայացնելով դրանց հիմքում առկա

պատճառները, գործոններն ու առանձնահատկությունները, այդ թվում՝ տարածաշրջանային երկրների հետ ունեցած փոխառնչություններն ու կրած ազդեցությունները: Էլամական ու Մարական քաղաքային բնակավայրերի առնչությամբ, հետազոտողը փաստել է, որ դրանք անցել են պատմաքաղաքական, սոցիալական, քաղաքաշինական, միջավայրային կառուցապատման ու ճարտարապետական տրանսֆորմացիաների միմյանց հաջորդող շրջափուլեր՝ Աքեմենյանների նվաճումից մինչ Սասանյանների շրջանը: Ներկայացնելով Աքեմենյան, Պարթևական, Սասանյան ընդգրկված քաղաքները, հետազոտողը հիմնավորել է, որ դրանք եղել են լավ զարգացած՝ որպես քաղաքային հատակագծման, քաղաքաշինական ու բնակավայրային կենտրոններ, իսկ տարածական կառուցվածքի առումով ձևով եղել են հոմոգենես՝ կազմակերպված փոխհատվող փողոցներով և ուղղված աշխարհի չորս կողմերին: Համաձայն հետազոտողի ուսումնասիրության, Աքեմենյան քաղաքների քաղաքաշինական ու ճարտարապետական արվեստներում իրանական բնորոշ գծերի կողքին նկատվում են մարական, ասորական և հունական տարրեր, մինչդեռ պարթևական քաղաքները կրել են հունահելլենիստական ու հռոմեական քաղաքաշինական ու ճարտարապետական ազդեցություններ, իսկ Սասանյան քաղաքները հիմնադրվել են հասարակության հիերարխիկ կառուցվածքը նկատի առնելով, տնտեսական, մշակութային, կրոնական, վարչական, ռազմական նպատակներով՝ մեծավ մասամբ շրջանաձև և ուղղանկյունաձև հատակագծային հորինվածքներով:

Երրորդ գլուխը զբաղեցնում է 99-127 էջերը և ներկայացվում են հին հայկական ու վաղ միջնադարյան (ուրարտական, Երվանդական, Արտաշեսյան և Արշակունյաց թագավորությունների շրջափուլեր. մ.թ.ա. 9 - մ.թ. 5/6) քաղաքային բնակավայրերը՝ անդրադառնալով դրանց ձևավորման ու քաղաքաշինական սկզբունքներին, ճարտարապետական կառուցապատման առանձնահատկություններին, փոխառնչություններին, կրած ազդեցություններին և այլ հարցերի:

Ներկայացվել է, որ Հին Հայաստանում լանդշաֆտի ու քաղաքաշինական առանձնահատկությունների առումով քաղաքները հիմնադրվել են առևտրային

ճանապարհների վրա և գետերի խառնարանում, հիմնականում ունեցել են ռելիեֆային կանոնիկ պահանջներով կառուցվածք, իսկ հատակագծման առումով արվել են երկմաս կազմով, սովորաբար՝ կանոնավոր հատակագծմամբ, առևտրահասարակական ագորատիպ կենտրոններով, կրել են միջագետքյան, հելլենիստական, հունահռոմեական ազդեցություններ:

Ըստ էության աշխատանքը կառուցված է պատմաշխարհագրական աղբյուրագիտական ու հնագիտական տվյալների հիմքով, որի հիման վրա հետազոտողն ինքնուրույն կերպով զարգացրել է բնակավայրերի համեմատություններն ու վերլուծությունները: Եվ չնայած ընտրված ժամանակաշրջանի տարոհունակությանը և ծավալային հանգամանքին, կատարվել է մանրակրկիտ աշխատանք:

Ընդհանուր եզրակացություններում ատենախոսը կատարել է նյութի համեմատական տվյալների ամրագրում՝ եզրակացնելով, որ իրանական և հայկական ուշ անտիկ և վաղմիջնադարյան քաղաքներն ու դրանց քաղաքաշինական տվյալները մեծ կարևորություն ունեն հին և վաղ միջնադարյան հունական, հռոմեական ու հելլենիստական քաղաքաշինական սկզբունքների բյուրեղացման գործընթացներում, և որ դրանցում եղած զարգացման ելևէջները օժանդակում են ժամանակի քաղաքաշինական նյութերի փոխադարձ լրացմանը:

Ատենախոսի սեղմագիրն ու տպագրած 9 հրատարակությունները լիովին համապատասխանում են ատենախոսությանը:

Այդուհանդերձ, կուզեինք նշել, որ այցելած լինելով Իրանի մի քանի բնակավայրեր, և նմանապես իմանալով հայկական օրինակները, կարծում ենք, որ նպատակահարմար կլիներ, եթե համեմատությունները կատարվեին միայն քվադրանտային ստրուկտուրա ունեցող բնակավայրերի մի քանի օրինակների կտրվածքով, որ ճանաչողական հանգամանք է աշխատության ընտրված ժամանակահատվածի համար:

Հաշվի առնելով հետազոտողի ընտրած թեման, ցանկալի կլիներ, եթե ուսումնասիրությունն իրականացվեր առավել սեղմ ժամանակագրական-

պատմական, հետևաբար նաև առավել նվազ քանակով ընտրված բնակավայրերի օրինակներով: Այլ էական դիտողություններ չկան:

Եզրակացություն. Վերը շարադրվածը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացությանը.

Գոլրոխ Քեշավարզ Ռահբարի «Հայ-իրանական քաղաքաշինական առնչությունները մ. թ. ա. 8-րդ – մ.թ. 7-րդ դարերի ճարտարապետության համատեքստում» թեմայով ատենախոսությունը ավարտուն աշխատանք է, պարունակում է ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակության կարևոր նորույթներ ու լիովին բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման գործող կանոնակարգով թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Գոլրոխ Քեշավարզ Ռահբարը միանգամայն արժանի է ԺԸ.00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունում ներկայացված դրույթներն ու վերջնարդյունքները անհրաժեշտ են Իրանում և Հայաստանում այս թեմայով զբաղվող մասնագետների, պահպանության ու վերականգնումների հարցերով զբաղվող պետական և մասնավոր կառույցների համար. արդյունքները կարելի է ներդնել նաև պահպանության, վերականգնման նախապատրաստման կամ ցանկացած այլ ճարտարապետական գործնականում կիրառելի նախագծերում, ինչպես նաև քաղաքաշինության տեսության ու պատմության ուսումնասիրության ոլորտում:

Կատարող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ ճարտարապետ **Ս. Քալաշյան**